

ՀՈԳԵԲՈՐ ԸՆԹԵՐՑՈՒԲՈՒՆԵՐ

ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱԷՐՆԵՐ*¹

ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԹՂԹԻ ԺԲ.-ԺԴ. ԳԼՈՒԽՆԵՐԸ (ՄԱՍ Գ.)

Ինչպես տեսանք նախորդ համարներում² լեզուների երկու դասի գոյությունը չի համապատասխանում Գործք Առաքելոցի բնագրին, ուստի եւ այդ փաստը՝ Կորնթոսի լեզուների այլ դասի լինելը, կարելի է համարել անիրական: Սակայն կարելի է շարունակել այդ փաստի քննարկումը եւ բերել այլ համարներ, որոնք ավելի հիմնաւոր կդարձնեն լեզուների երկու դասի գոյութեան ժխտումը Գործքի շարակարգում:

Հետաքրքրական են Նորման Գայզլերի դիտարկումները³ նուիրում կորնթացիների լեզուախօսութեան անհատական լինելու տեսակետին, որ առաջ են քաշում մերօրեայ գլոսալալները՝ պենտեկոստալներն ու խարիզմատները:

Գործք Առաքելոցում երբ հանդիպում է *լեզու* բառը, այն միանշանակ հասկացում է *լեզու* հէնց *լեզու* նշանակութեամբ, առանց բացառութեան: Այսինքն՝ *լեզու* բառը Գործքում նշանակում է իրական, գոյութիւն ունեցող լեզու, որով խօսում էին այդ ժամանակաշրջանում եւ կար այդ լեզուն կրող ժողովուրդ, կամ լեզու, որի կրողները արդէն գոյութիւն չունէին, բայց այդ մշակոյթը կար. օրինակ՝ դասական եբրայերէնը՝ Մովսէսի ժամանակների լեզուն, եւ արամէական լեզուն՝ Ա. դարի հրէաների կենցաղային լեզուն, որ բաւականին տարբերում էր դասականից: Հայերէնի պարագայում դա գրաբարն է, որի կրողները այսօրուայ հայերի նախնիները, իսկ արդի արեւելահայերէնին, որ տարբերում է գրաբարից, այսօրուայ հայերն են: Ինչո՞ւ է պետք այդքան մանրամասնել. թուում է թէ անիմաստ է, բայց այդ սկզբունքները պետք է հստակ պատկերացնել, քանի որ ժամանակակից խարիզմատները հէնց դրա վրայ են հիմնում իրենց չարափառ վարդապետութիւնը գլոսալալիայի վերաբերեալ: Մերօրեայ գլոսալալները իրենց համարում են հոգեգալստականներ՝ նկատի ունենալով Գործք Առաքելոցի Բ. 3-11 համարները, ուր առանձնացնում են մի քանի դարձածրներ՝ հիմնաւորելով գլոսալալիայի երևոյթը: Այսպէս՝ նրանք բերում են Բ. 8 համարը, ուր ասում է. «*Բայց ինչպէ՞ս է, որ մենք նրանց լսում ենք մեր իւրաքանչիւրի քարքառով, որ ծնուած օրից խօսում ենք*»:

Կամ ԺԱ. 15 համարը, ուր Պետրոս առաքյալը հաստատում է լեզուներ խօսելու

* Սկիզբը «Էջմիածին», 2012, Ա.-ԺԲ., 2013, Ա.-Թ.:

² Տե՛ս «Էջմիածին», 2013, Ը.-Թ.:

³ Տե՛ս Norman Geisler, *Sings and Wonders*, Tyndale, 1988, էջ 165-168:

փաստը՝ Կոմենլիտսի տանը խօսելով լեզուների պարզեի մասին. «Եւ երբ սկսեցի խօսել, Սուրբ Հոգին իջաւ նրանց վրայ, ինչպէս որ իջել էր մեր վրայ սկզբում»:

ԺԹ. 6-ում այդ մասին անլի հստակ է ասում. «Եւ երբ Պօղոսը նրանց վրայ ձեռք դրեց, Սուրբ Հոգին իջաւ նրանց վրայ. լեզուներ էին խօսում եւ մարգարէանում»:

Այս մի քանի համարների վրայ, այն էլ կտրուած բուն բնագրից, հիմնուած է գլոսալաների տեսակետը:

Նշենք նաեւ, որ որոշ թարգմանութիւններում վերջին համարի մէջ աւելացնում են *ուրիշ* կամ *այլ* բառերը *լեզուներ* բառից առաջ: Անշուշտ, դա արւում է իբր բնագիրը բացատրելու համար, մինչդեռ ստացւում է միանգամայն հակառակ պատկերը: Յունարեւում, ինչպէս նաեւ գրաբարում, այդ *ուրիշ* կամ *այլ* բառերը չկան, այսինքն՝ ԺԹ., ինչպէս նաեւ ԺԱ. գլոսիւնների *լեզու* բառը նոյն իմաստն ունի, ինչ որ Բ. գլխում:

Մերօրեայ գլոսալաները այդ խնդրի վերաբերյալ ունեն մի այնպիսի տեսակետ, որը ակնյայտօրէն տարբերւում է մնացած բոլոր տեսակետներից: Հայաստանի պենտեկոստալները՝ հոգեգալստական աղանդի հետեւորդները, այդ տեսակետին են յարում նաեւ այսօր⁴:

Ըստ այդմ, Հոգեգալստեան օրը, Ս. Հոգին իջաւ Վերնատանը, եւ աշակերտերը սկսեցին խօսել ոչ թէ տարբեր՝ տասնհինգ եւ աւել լեզուներով, այլ մէկ լեզուով, որն այսօրուայ գլոսալաների բարբաջանքի նման է, իսկ լսողներն այդ անիմաստ արտաբերումները լսում էին իրենց բարբառով կամ այն վայրի խօսակցական լեզուներով որտեղ ապրում էին իրենք: Այսինքն՝ Գործք Առաքելոցի Բ. գլխում եղել է ոչ թէ **լեզուախօսութեան**, այլ՝ **լեզուալսելիութեան** հրաշք: Սա, անշուշտ, *nonsense* է:

Այդ տեսակետը հիմնաւորող համարները, որպէս կանոն, նրանք գտնում են Գործք Բ. 6-11 հատուածում, ուր Ղուկասը օգտագործում է *մենք լսում ենք*, *ամէն մէկը լսում է*, *լսում էին* բառերը. «Եւ երբ այս ձայնը լսուեց, բազմութիւնը հաւաքուեց ու խոնուեց, որովհետեւ **լսում էին**, որ նրանք խօսում էին իրենցից իւրաքանչիւրի լեզուով: Ամէնքը հիւսնում էին եւ գարնանում. ու միմեանց ասում էին. «Չէ՞ որ սրանք բոլորը, որ խօսում են, գալիլիացիներ են. բայց ինչպէ՞ս է, որ **մենք նրանց լսում ենք մեր իւրաքանչիւրի բարբառով**, որ ծնուած օրից խօսում ենք: Մենք՝ պարթեւներ, մարեր եւ իլամացիներ, եւ նրանք, որ բնակւում են Միջագետքում, Հրէաստանում եւ Գամիլիքում, Պոնտոսում եւ Ասիայում, Փոփոցիայում եւ Պամփիլիայում, Եգիպտոսում եւ Կիւրենիայի հարեւան Լիբէայի շրջաններում, եւ Հռոմից եկածներ՝ թէ՛ հրեաներ եւ թէ՛ հրէութեան դարձածներ, կրեւտացիներ ու աւարներ, եւ լսում ենք, որ նրանք **խօսում են** մեր լեզուներով Աստծու մեծագործութիւնների մասին»⁵:

Այստեղ գլոսալաները օգտագործում են յայտնի մեթոդը՝ շարակարգից դուրս հանելով նշուած հատուածը:

⁴ Տարիներ առաջ, անցեալ դարի եօթանասունականներին, հայաստանեան պենտեկոստալ շարժման ղեկավարները լեզուների վերաբերեալ հարցի բնարկումներին այդ նոյն տեսակետն էին պաշտպանում:

⁵ Ընդգծումները մերն են:

Բայց նման մօտեցումը ճիշտ չէ, քանի որ շարակարգից դուրս ինչ ուզես կարող ես հասկանալ: Մանաւանդ ընդգծումը բառերը կարծես հէնց այդ տեսակետն են պաշտպանում, բայց դա միակողմանի դիտարկում է: Առանձնացրած հատուածը նկարագրում է ընդամենը **մէկ ընդհանուր երեւոյթի՝** Հոգեգալստեան ժամանակ տեղի ունեցած հրաշքի միայն վերջին մասը: Մինչդեռ հարկ է այդ հատուածը չանջատել սկզբի մասից եւ այնտեղից սկսել, քանի որ առանց սկիզբը հաշուի առնելու, չենք կարող այդ բառերի իմաստը հասկանալ: Ահա սկիզբը՝ Գործք Բ. 3-4 համարները. *«Եւ նրանց երեւացին բաժանուած լեզուներ, նման բոցեղէն լեզուների, որոնք եւ նստեցին նրանցից իւրաքանչիւրի վրայ: Եւ բոլորը լցուեցին Սուրբ Հոգով ու սկսեցին խօսել ուրիշ լեզուներով, ինչպէս որ Սուրբ Հոգին նրանց խօսել էր տալիս»:*

Այստեղ Ս. Հոգու տուած այդ լեզուները **բաժանուած լեզուներ** էին, որոնք նստեցին առանձին ամէն մէկի վրայ, այսինքն՝ տարբերում էին իրարից: Իսկ եթէ տարբերում էին, նշանակում է, որ այդ *բաժանուած լեզուները* իրական, կենդանի լեզուներ էին, քանի որ գոսսալալիան գրեթէ նոյնն է բոլոր ազգերի համար՝ լինեն հայ, ռուս, չինացի, եւրոպացի եւ այլն, այն է՝ անիմաստ նոյնատիպ բարբաջանք: Նշենք նաեւ վերը բերուած հատուածից մէկ փաստ եւս. *սկսեցին խօսել ուրիշ լեզուներով*, հատուածում **լեզուներով** բառը հոգնակի թիւ ունի, այսինքն՝ այդ լեզուն տարբերում էր հրէաներին ծանօթ լեզուներից:

Միւս կողմից, ինչպէս երեւում է բնագրից, այդ հատուածի հեղինակը ոչ թէ այնտեղ ներկայ գտնուողներն էին, այլ՝ Գործքի հեղինակ Ղուկաս աւետարանիչը. վերջինս գրում է այդ լեզուների մասին, որ դրանք *տարբեր* լեզուներ էին, արդուած էին առանձին անհատներին եւ ուրիշ լեզուներ էին: Եթէ նկատի ունենանք այն փաստը, որ Ղուկասը մասնագիտութեամբ բժիշկ էր եւ կզանազանէր գոսսալալիայի երեւոյթը իրական լեզուախօսութիւնից, ապա կարող ենք միանշանակ պնդել, որ ժամանակակից գոսսալալները սխալում են այս կարեւոր հարցում՝ իրենց էքստատիկ, անիմաստ գոսսալալիան համապատասխանեցնելով Գործքի Բ. գլխի հետ, որը միանգամայն սխալ է: Հետեւաբար, այդ շարժման հիմնաքարը այդ սխալ սկզբունքն է, եւ դա է պատճառը, որ ամէն օր մի նոր խարիզմատ ուղղութիւն է երեւան գալիս՝ զանազան, տարբեր անուններով՝ ոչ լեզուներով, ու փորձում ներկայանալ որպէս միակ, ճշմարիտ, աստուածային յայտնութեան կրող:

Յաջորդ փաստարկը, որ բերում է Գայգերը, Հռոմ. ԺԴ. 10 համարն է. *«Այնչափ լեզուների տեսակներ կան աշխարհում, քայց չկայ ոչինչ աննշանակ»:*

Այստեղ Պօղոս առաքեալը, հաւատարիմ մնալով իր սկզբունքներին, ներկայացնում է լեզուախօսութիւնը աշխարհիկ օրինակով՝ բազում լեզուների, որ գոյութիւն ունի աշխարհում, շեշտը դնելով այն փաստի վրայ, որ դրանք առանձին-առանձին իմաստ եւ նշանակութիւն ունեն: Դա նշանակում է, որ նոյն ձեւով էլ կորնթոսեան լեզուները պիտի ունենան նոյն իմաստային նշանակութիւնը, այսինքն՝ լինեն լեզուներ կամ ունենան լեզուներին բնորոշ յատկանիշեր, ինչպիսին են աշխարհում գոյութիւն ունեցող լեզուները: Այսինքն՝ դարձեալ, մերօրեայ գոսսալալների պատկերացրած լեզուների մասին չէ, որ խօսում է Պօղոս առաքեալը:

Խօսելով Պողոս առաքելի նշած շնորհների մասին (ԺԲ.-ԺԴ. գլուխներում)՝ Գայզերն առաջարկում է ուշադրություն դարձնել հետեւեալ կէտի վրայ. լեզուների **մեկնաբանութեան** եւ **թարգմանութեան** վրայ: Այսինքն՝ առաքելը միշտ խրախուսում է անհասկանալի լեզուները մեկնաբանելը, նոյնն է թէ՛ թարգմանելը: Իսկ սա նշանակում է, որ Ս. Հոգու տուած լեզուներով խօսքը կարելի է թարգմանել, իսկ թարգմանել կարելի է միայն այն լեզուն կամ այն լեզուով խօսակցութիւնը, որը իրական կամ ինչ որ կանոններով արտայայտած խօսք է, ոչ թէ՛ անիմաստ արտաբերումներ: Միայն իրական լեզուով արտայայտած միտքը կարելի է թարգմանել կամ մեկնաբանել օտար՝ ուրիշ լեզուով: Իրօք, անիմաստ արտաբերումները, որ այսօր մերօրեայ գլոսալալները լեզու են համարում, չի կարելի թարգմանել կամ ինչ-որ կերպ մեկնաբանել: Թարգմանչի առկայութիւնը նշանակում է, որ նա՝ թարգմանիչը, պէտք է հասկանայ այն խօսքը, որ լսում է, եւ բառ առ բառ, նախադասութիւն առ նախադասութիւն պիտի թարգմանի հասկանալի, իմաստային ձեւով: Հակառակ դէպքում այն, ինչ ինքը լսում է ու չի հասկանում, ինչպէս մերօրեայ գլոսալալների պարագայում է, եւ սկսում է թարգմանել ապա ստացում է մէկ այլ ինքնորոյն խօսք, որը ոչ մի կապ չունի առաջինի հետ:

Պողոս առաքելը Ա. Կորնթ. ԺԴ. 24-ում գրում է. *«Ապա ուրեմն, լեզուները նշան են. բայց ոչ հաւատացեալների, այլ՝ անհաւատների համար. իսկ մարգարէութիւնը ոչ թէ անհաւատների համար է, այլ՝ հաւատացեալների»:*

Այս համարում առաքելը ակնարկում է Եսայի ԻԸ. 11 համարը. *«...շրթունքներիդ անգգամութեան համար այդ ժողովրդի հետ խորթ լեզուով պիտի խօսեն»:* Խորթ՝ օտար լեզուով խօսել նշանակում է հրէաներին անձանօթ լեզուով խօսել, որն իրական, գոյութիւն ունեցող լեզու է, բայց իրենց թշնամու լեզուն է, որ իրենք չէին հասկանում: Իսկ այդպիսի լեզուն, անշուշտ, կարելի է թարգմանել եւ լսողները կկարողանան հասկանալ:

Գայզերը, ամփոփելով վերոնշեալ դիտարկումները, ասում է, որ այն գաղափարը, որ կորնթոսի լեզուխօսութիւնը մէկ այլ դասի է պատկանում, անհիմն է. գարմանալի չէր լինի, որ նրանք՝ կորնթացիները, այսօրուայ գլոսալալների եւ հոգեգալստական աղանդաւորների նման անիմաստ բարբառէին եւ այդ համարէին լեզու, անհատական լեզու: Ցանկացած մարդ կարող է գլոսալալիայի երեւոյթին հաղորդ լինել մի քիչ վարժութիւններ անելուց յետոյ, ինչպէս դա անում էին նախկինում դէպիեան գուշակները, հռոմէական սիբիլլաները, մերօրեայ շամաններն ու շատ հեթանոս ազգերի քրմեր կամ գուրուներ: Միանգամայն այլ բան է իրօք խօսել լեզուով, որն իմաստ է արտայայտում, որն իրօք կարելի է թարգմանել եւ որն իրօք լսողների համար ուրիշ կամ այլ լեզու է համարում: Մնացած բոլոր տեսակի լեզուախօսութիւնը, ինչ անուն էլ որ տան այդ երեւոյթին, չի կարող համարուել սուրբգրային:

(Շարունակելի)